ՄԱՐԴՈՒ ԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԿՀԻԶՄՈՒՄ

Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ժամանակակից կրոնների ուսումնասիրություններում բավականին մեծ տեղ է հատկացվում կրոնական մարդաբանության հիմնահարցերին, որոնց վերաբերյալ տարբեր կրոններում դարեր ի վեր ձևավորվել են տարբեր հայեցակարգեր՝ երբեմն որոշակի ընդհանրություններով, երբեմն էլ տարբերություններով: Այս առումով բացառություն չէ նաև Հնդկաստանի ամենաերիտասարդ ազգային կրոնը՝ սիկհիզմը, որը մարդու մասին ունի սեփական, միաստվածային կրոններին յուրահատուկ հայեցակարգը՝ համեմված թե՛ հինդուիստական և թե՛ իսլամական մարդաբանական պատկերացումներին բնորոշ գծերով: Ձևավորվելով հինդուիստական միջավայրում՝ սիկհիզմը վերցրեց հնդկական կրոնափիլիսոփայական համակարգերի հիմնական հասկացություններն ու եզրերը՝ դրանք ներկայացնելով սեփական մեկնաբանությամբ[1]:

Սիկհական արարչագործության համաձայն՝ Աստված մարդուն ստեղծել է այնպես, որ նա հասկանա Իրեն և Իր հետ դառնա մեկ ամբողջություն[2]: Իհարկե այստեղ ակնհայտ են միաստվածային կրոններին բնորոշ արարչագործության տարրեր, սակայն սիկհականը տարբերվում է նրանով, որ ի տարբերություն իսլամի (որից բավականին ազդվել է), մարդու արարման նպատակը ներկայացնում է այլ տարբերակով՝ եթե իսլամում մարդը պետք է ծառայի Աստծուն և կատարի նրա կամքը, ապա այստեղ մարդը աստվածճանաչողության վերջնակետում պետք է միաձուլվի Բացարձակին, Տիեզերականին[3]: Սիկհական փրկության ճանապարհը «... Աստծո հանդեպ սերն է, նրան ճանաչելը և նրա հետ

---

[1] Սիկհական ուսմունքի հիմնական սկզբունքների մասին տե՛ս **История религии** (под общ. ред. И. Н. Яблокова). В 2 т., Т. 1, М. 2002, с. 330-332.

[2] Սիկհական գոյաբանության և արարչագործության մասին մանրամասն տե՛ս **Успенская Н.Е., Котин И.Ю.** Сикхизм, СПб., 2007, с. 127-114.

[3] Աստծո մասին սիկհական ընկալումները տե՛ս **Бельский А. Г., Фурман Д.Е.,** Сикхи и индусы: религия, политика, терроризм, М. 1992, с. 20-21.

միաձուլվելը, հասնելը այնպիսի վիճակի, երբ աստվածային և սեփական էությունները դառնում են մեկ ամբողջություն»[1]:

Սիկհիզմը ընդունում է հոգու անմահության գաղափարը և համարում, որ Աստված փչել է մարդու մեջ Աստվածային կայծ՝ նրա հոգին, որը կարող է զարգանալ և միավորվել Բարձրագույն Էությանը:

Ըստ մանրամասն մշակված սիկհական հայեցակարգի՝ մարդը համարվում է Աստծո պատկերը, չնայած որ ձևավորված է մայրական արգանդում և ծնված պտղի տեսքով: Մարդու զգայարանները տեղեկություն են հասցնում ուղեղ, որը կառավարում է ամբողջ օրգանիզմը: Մարդը շատ ընդհանրություններ ունի բոլոր շնչավոր արարածների, կենդանիների հետ, սակայն օժտված է բանականությամբ, ինչը նրան հնարավորություն է տալիս գիտակցել իր առջև դրված կենսական նպատակները և որոշել դրանց հասնելու ճանապարհները[2]: Նա ոչ միայն մտածում է իր բնական կարիքները հոգալու մասին, այլև ունի հոգևոր պահանջմունքներ, որոնցից գլխավորը մարդու խոհերն են կյանքի իմաստի ու փրկության մասին: Ինչպես գուրուներն[3] էին ասում. «Մարդկային կյանքը ոսկե հնարավորություն է, և եթե այն նվիրված չէ Նաամ Սիմարանին (Աստծո անվանումներից մեկը սիկհիզմում՝ Պ. Բ.), ապա անիմաստ է վատնված»[4]: Ինչպես և իսլամում ու քրիստոնեության մեջ (իհարկե, սիկհական առանձնահատկություններով), մարմինը ժամանակավոր է, և նրանք, ովքեր չափազանց մեծ ուշադրություն են դարձնում իրենց մարմնին, փայփայում ու զուգում են այն, անկասկած հիասթափություն են ապրում, և միայն նրանք, ովքեր իրենց սիրտը նախապատրաստում են հավերժական ճշմարտությանը, զգում են ուրախություն և օրհնություն:

Մարդուն տրված հինգ զգայարանները (համ, հոտ, տեսողություն, լսողություն, շոշափելիք) մարդուն տրված են որպես ճանաչողության օրգան Գյան Ինդրի: Միաժամանակ մարդն ունի նաև գործողության հինգ

---

[1] **История религии,** Т. 1, с. 331.

[2] **Успенская Н.Е., Котин И.Ю.** Сикхизм, с. 141-142.

[3] Սիկհիզմը տասը գուրուների (ուսուցիչների) ստեղծած ուսմունքն է, որը հիմնականում շարադրված է Ս. Գրքում՝ Ադի Գրատհում: Տասը գուրուների մասին մանրամասն տե՛ս **Религия сикхов,** Сикхский миссионерский центр, (Пер. с англ.: И.Н. Полонская, В.Н. Нечипуренко), Р-н-Д, 1997, с. 21-387.

[4] **Успенская Н.Е., Котин И.Ю.** Сикхизм, с. 142:

օրգան՝ Կարմա Ինդրա, որոնք են բերանը, ձեռքերը, ոտքերը, սեռական և արտազատման օրգանները:

Մարդը Տիեզերական Էության մի մասն է, իսկ նրա հոգին Աստվածային լույսի մի շող է, Աստվածային կրակի մի կայծ: Յուրաքանչյուր մարդու անհատականությունը բաղկացած է երեք տարրերից. աթմա՝ ոգի, բուդհի՝ ինտուիցիա, մանաս՝ բանականություն[1]: Աթման Աստվածային հոգու մի մասն է, բուդհին՝ ներքին պայծառացումը, որը լինում է աստվածաշնորհ մարդկանց մոտ: Այն գործում է առանց զգայական օրգանների և մտքի օգնության: Մանասը կապված է գիտակցության հետ և ի հայտ է գալիս զգայական օրգանների ցուցումների շնորհիվ: Որպեսզի նրա որոշումները և գնահատականները ճիշտ լինեն, այն մշտապես պետք է գտնվի հսկողության տակ, որին կարելի է հասնել առաքինի մշտական գործողություններով: Գուրու Նանակն ասում էր, որ ինչպես կեղտոտ հագուստը կմաքրվի օճառով լվանալիս, այնպես էլ մեղքով և կեղտով վարակված մարդկային սիրտը կմաքրվի սուրբ Անվան մոգական զորությամբ. «Այնպես, ինչպես մենք չենք կարող ալիքների և տիղմի պատճառով տեսնել լճակի հատակը, այնպես էլ չենք կարող Աստծուն տեսնել այնքան ժամանակ, քանի դեռ ցանկությունների ալիքները չեն հանդարտվել և միտքը չի հանգստացել: Բանականության անմաքրությունը խավար էկրանի նման խանգարում է: Երբ այն վերանում է, Աստված տեսանելի է դառնում ներքին հայացքի առջև»[2]:

Մարդու ներքին ջանքերի, հոգևոր որոնումների արդյունքում Աստծո հետ միավորվելու զգացումը կոչվում է լիվա: Նամդևն այսպես էր ասում. «Ճիշտ այնպես, ինչպես օդապարուկ բաց թողած տղան խոսում է իր ընկերների հետ, բայց ամբողջ ուշադրությունը օդապարուկի և պարանի կողմն է, ինչպես ջրով լի սափորը գլխին դրած գեղեցկուհի գեղջկուհին է ընկերուհիների հետ զրուցում, բայց մշտապես հիշում է իր ջրով լի սափորի մասին, ինչպես դաշտում արածող կովը չի մոռանում իր հորթուկի մասին, ինչպես ճաշ եփող կինը մտածում է օրորոցում թողած երեխայի մասին, ճիշտ այդպես էլ Աստծուն սիրող մարդը արտաքուստ զբաղված է

---

[1] **Նույն տեղում,** էջ 143:

[2] **Նույն տեղում**:

աշխարհիկ գործերով, բայց նրա միտքը կենտրոնացած է Անվան վրա»[1]: Աստծո հետ այդ միասնությունը, հավատացյալին շրջապատում է հատուկ շղարշով: Հավերժության հետ ներդաշնակության և համաձայնության մեջ մարդը չի զգում ոչ ցավ, ոչ տխրություն. նա միաձուլվում է Աստծո հետ:

Մարդու գործողությունները պարկեշտ են, թե անպարկեշտ, կախված են դրանց հետևում կանգնած դրդապատճառներից:

Աշխարհիկ ցանկությունները՝ «տրիշնա կամ վաշնա», կրքերն են, ինչ-որ բանի նկատմամբ հոգևոր սովը, քաղցը: Այդ զգացմունքը մի առարկայից մյուսին անցնելու, և ամեն ինչ նորից սկսելու հատկություն ունի: Ցանկությունները լինում են երկու տեսակ՝ եսասիրական և ոչ եսասիրական: Եսասիրական ցանկությունները միտված չեն Աստվածայինի իմացությանը, քանի որ ուղղված են սեփական կյանքը բարելավելուն: Նույնիսկ փառասիրությունը և սնապարծությունը հանցավոր են: Ոչ եսասիրական ցանկությունները բարոյական են և ամեն կերպ պետք է խրախուսվեն ու զարգացվեն, քանի որ ուղղված են այլ մարդկանց վիճակը բարելավելուն և Աստծո ստեղծած արարածներին ծառայելուն:

Կամքը՝ իչչհան, մարդուն բնորոշ մի բան անելու կամ չանելու զորություն է: Այն ղեկավարում է զգացմունքներն ու կրքերը և չի ենթարկվում արտաքին ազդեցություններին: Նա ծանր պարտասխանատվություն է դնում մարդու վրա, որն իր կամքի համաձայն է որոշում ընդունում: Կամքը պետք է ուղղված լինի և օգտագործվի օրինավոր և արժանի գործերի համար: Եթե անհատական կամքը ներդաշնակ է Աստծո կամքի հետ, ապա արդյունքը կատարյալ է:

Խիղճը՝ վիվեկը, մարդու ներքին ձայնն է: Գուրուները սովորեցնում են, որ խղճի տեսքով Ինքը՝ Աստված է բնակվում մարդու մեջ: Տարբեր մարդկանց մոտ այն տարբեր է՝ կախված անհատի զարգացածության աստիճանից: Մարդու հոգում չարի և բարու մշտական պայքար է: Խիղճը նրան հուշում է, թե ի՞նչն է ճիշտ և ի՞նչը՝ սխալ: Մարդիկ երջանիկ են, եթե կատարում են նրա հրամանները և դժբախտ են, եթե չեն հնազանդվում նրան: Խիղճը մարդուն պաշտպանում է չարից և մեղքից: Այն մարդու մեջ ամեն լավի սկիզբն է[2]:

---

[1] **Նույն տեղում,** էջ 143-145:

[2] **Նույն տեղում,** էջ 145-146:

Բավականին յուրատեսակ են սիկհական ընկալումները սիրո և երջանկության մասին: Գուրուների ուսմունքի համաձայն՝ Աստված մարդուն ստեղծելիս՝ չէր ձգտում ստեղծել մեկին, որի վրա կարելի կլիներ փորձել տարատեսակ չարչարանքներ: Նա մարդուն ստեղծել է սիրո և երջանկության համար: Աստված մարդուն տվել է կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ: Մարմնի համար դա սնունդն է ու ջուրը, իսկ հոգու համար Աստծո մասին մեդիտացիան և առաքինությունը: Երբ հոգին աճում է բարի գործեր կատարելով և առ Աստծված մշտական մտքերով, այն բավականին մաքրվում է, որպեսզի միաձուլվի Աստծուն: Գուրու Արջունը ասում էր. «Հիմա, երբ դուք գոյատևում եք մարդկային կերպարանքով, հնարավորություն ունեք հանդիպել Աստծուն: Մնացյալն անիմաստ է: Հիշե՛ք Աստծու Անունը և միշտ գտնվեք սրբերի ու գուրուների ընկերակցության մեջ: Կյանքն անիմաստ է անցնում, եթե թունավորված է մայայի պատրանքներով»[1]:

Մարդկային հոգին և մարմնի նյութը բնույթով շատ տարբեր են: Հոգին նուրբ է և եթերային, մարմինը ծիգ և կոպիտ: Սակայն հոգին է այն, ինչ ամրացնում է մարմինը: Մյուս կողմից մարդը պետք է ամուր պահի իր մարմինն ու առողջությունը, որովհետև մարմինն է պարունակում Աստվածայինի մի մասնիկը՝ հոգին: Աստված և անհատական հոգին ի վերջո նույն բանն են: Նրանք հարաբերվում են ինչպես օվկիանոսը և կաթիլը, արևը և արևի շողը, կրակը և կայծը: Նրանց միջև տարբերությունն այն է, որ մարդն ունի եսասիրություն՝ հաումայի, որը նրա հոգին առանձնացնում է Աստվածայինից:

Ըստ գուրուների՝ հոգին անմահ է և անհատական: Անհատական հոգին գոյատևում է նաև մարմնի քայքայումից հետո: Մահը չի նշանակում վերջնական վերացում: Դա հոգու ճանապարհի շրջափուլերից մեկն է: Եթե մարդը մի կյանքի ընթացքում չի հասնում Աստվածային նպատակին, ապա նա նոր հնարավորություն է ստանում այլ ծնունդի տեսքով: Գուրուները դա անվանում են Ավագավան («մուտք, հեռացում») կամ մահերի ու ծնունդների շրջան: Նրանք բացատրում էին, որ, անկասկած, հոգին զգալի առաջընթաց է ապրել՝ կյանքի ստորին, ցածրակարգ ձևերից հասնելով

---

[1] **Նույն տեղում,** էջ 146: *Մայա* հասկացության մասին ասվում է, որ աշխարհը մայա է, իսկ «... մայան ստի քաղաքն է, մտքի երևակայությունը, տեսիլք, այն հաստատուն չէ ծառի ստվերի նման», տե՛ս **Sri Guru Granth Sahib**. Vol. II. Patiala, 1987, p. 1667.

բարձրագույնին՝ մարդկայինին: Այն անցնում է 84 լակհա (840000) գոյության ձևերով, մինչև մարդկային կերպարանք ստանալը[1]: Գուրու Նանակը մարդու մասին ասում էր. «Այդ հոգին ապրել է շատ լոների մեջ»[2]: Քանի դեռ հոգին գտնվում է մարդկային ծնունդից ավելի ցածր մակարդակներում, նա չի կարող հաղթահարել իր կենդանական բնազդը և Աստծուց օտարված գոյությունը: Մարդն էլ է ապրում կենդանական կյանքով, մինչև չի գիտակցում իր գոյության նշանակությունը:

Հոգու համար մահվանից հետո կարող է լինել հնարավորությունների երկու տարբերակ. միաձուլում Տիեզերական Հոգու հետ կամ վերաբնակեցում, այսինքն՝ նոր ծնունդ: Գուրուները չէին ընդունում դրախտի և դժոխքի մասին այլ կրոնների ուսմունքները: Եթե գուրուները նույնիսկ օգտագործում էլ էին «դրախտ» և «դժոխք» բառերը, ապա միայն փոխաբերական իմաստներով. նրանք սրբերի համայնքը համեմատում էին դրախտի հետ, իսկ չարագործների միջավայրը՝ դժոխքի:

Սիկհիզմում հոգու վերաբնակեցումը բացատրվում է Կարմայի օրենքի գործողությամբ: Անհատական հոգին մահվանից հետո անցում է կատարում այլ գոյության՝ ըստ գործած արարքների արդյունքների: Եթե նա շատ չարիքներ է գործել, ապա հոգին ծնվում է ցածրակարգ էակների մեջ, իսկ եթե կուտակել է լավ արարքների պտուղները, ապա վերածնվում է որևէ լավ մարդկային ընտանիքում: Սակայն, ինչպես ընդունված է սիկհիզմում, ցանկացած նոր ծնունդ, միևնույն է, անեծք է և ստրկություն: Ծնունդների և մահերի շրջապտույտը հնարավորություն չի տալիս հոգուն միաձուլվել Աստվածայինին և ձեռք բերել մուկտի: Մուկտին կամ մոկշան (փրկություն) հնդկական փիլիսոփայական տարբեր ուսմունքներում տարբեր երևույթներ է նշանակում. հինդուիզմում այն վերածնությունների հավերժական շղթայից ազատագրումն է[3], բուդդայականության մեջ՝ Նիրվանան, միմանսայում՝ անցումն է դեպի Սուրագ երկինք: Սիկհական գուրուները մերժում էին մուկտիի հայեցակարգի այդպիսի կոնկրետացումը: Գուրուները սովորեցնում են. «Աստծո մարդը ցանկանում է միայն Աստծո սերը, և ուրիշ ոչինչ: Հրճվանքը երկնքում ոչինչ է

---

[1] Տե՛ս http://www.sikhism.ru/kratkiy-ocherk-osnovnyih-polozheniy-religii-sikhov/tsel-zhizni.html, 29.05.2018, 20.33:

[2] **Успенская Н.Е., Котин И.Ю.** Сикхизм, с. 147:

[3] **Индуизм. Джайнизм. Сикхизм**: Словарь / Под общ. ред. Альбедиль М. Ф. и Дубянского А. М./, М., 1996, с. 288

Աստվածային Ոգու հետ միաձուլվելու համեմատությամբ: Մարդու վերջնական նպատակը Աստծո հետ միաձուլվելն է: Ճիշտ այնպես, ինչպես փոքր երեխան է վայելում կյանքը և խաղերով ուրախանում, երբ գտնվում է իր մոր կողքին, և իրեն դժբախտ զգում, երբ բաժանված նրանից, այդպես էլ մարդն է վայելում կյանքը, որովհետև գտնվում է Աստծո ընկերակցության մեջ»[1]:

Սիհիզմում ի սզբանե էլ պարզ է դառնում, որ այն պրակտիկ կրոն է, մեծ տեղ է հատկացնում կրոնական պրակտիկ կյանքին:

Աստծո հետ կապ չունեցող աշխարհիկ մարդը սարսափում է մահվանից, որովհետև ամբողջ կյանքում վայելել է այս կյանքի անցողիկ ուրախությունները և ջանք չի թափել՝ ձեռք բերելու աստվածային պարգևը: Մահկանացուն տարվում է անցողիկ, սին հաճույքներով և գնում է դեպի ունայնություն: Նա կապված է մեղքի հետ և պետք է անցնի վերածնությունների և մահերի շղթայով: Հավատացյալ սիկհի համար մահ գոյություն չունի, որովհետև թեպետ նրա ֆիզիկական մարմինը դադարում է գոյություն ունենալ, սակայն հոգին ձուլվում է Տիեզերականին: Կաթիլը նորից հետ է թափվում օվկիանոս, և լույսի շողը ձուլվում է լույսի աղբյուրին: Մահը սարսափելի չէ մարդու համար, այն նրա համար Աստծուն միավորվելու դարպասն է: Մահվան նկատմամբ այսպիսի վերաբերմունքով է պայմանավորված նաև սիկհերի զուսպ սուգը հարազատի մահվան ժամանակ:

Ի տարբերություն շատ այլ կրոնների՝ սիկհիզմը չի հակադրում հոգևոր կյանքը աշխարհիկին: Սակայն նա հակադրում է մարդու եսակենտրոն կյանքը հոգևորին: Գուրուները կյանքը համարում էին իրական և ուսուցանում էին, որ պետք է ապրել և ոչ թե խուսափել նրանից, և պետք է ապրել ակտիվ կյանքով, որովհետև կյանքի գործերով և գործունեության արդյունքներով է տեսանելի եսասեր և Աստծուն նվիրված մարդկանց տարբերությունը: Գուրու Նանակն ասում էր. «Մենք ցանում ենք կարմայի սերմեր, երբ մեր համառ հաումայի հրամանով գործում ենք մեր հաճույքի համար: Այդ դեպքում մենք տառապանքի բերք կհավաքենք: Երբ մենք կսովորենք հնազանդվել Աստծո կամքին, մենք կդադարենք նոր

[1] **Успенская Н.Е., Котин И.Ю.** Сикхизм, с. 148:

կարմա ստեղծել: Մենք կսկսենք գործել Նրա կամքով և մեր արարքները կմատուցենք որպես զոհաբերություն»[1]:

Բանալի բառեր՝ *կրոնական մարդաբանություն, արարում, կյանք, հոգի, մարմին, կարմա, արարք, մեղք, ռեինկարնացիա, միաձուլում, Աստված, փրկություն, հատուցում:*

THE CREATION AND SALVATION OF HUMAN BEING IN SIKHISM

P. A. BARSEGHYAN
Candidate of Philiosophical Sciences
Assistant Professor

The concepts of creation and salvation of human being are one of the main issues in Anthropology in Sikhism. Human being was created to comprehend and assimilate to God. Soul is eternal and the idea of death doesn't mean complete extermination. The salvation of the human being is the aspiration to God and assimilation to Him. If a Human being does not reach salvation, he/she is given a new chance through reincarnation.

СОЗДАНИЕ И СПАСЕНИЕ ЧЕЛОВЕКА В СИКХИЗМЕ

П. А. БАРСЕГЯН
Кандидат философских наук, доцент

Среди ключевых вопросов сикхской антропологии - понятия о создании и спасении человека. Человек был создан, чтобы понять Бога и слиться с Ним. Душа бессмертна, а смерть не означает окончательное исчезновение. Спасение человека – это стремление к Божественному и слияние с Ним. А если человек не достиг спасения, ему предоставляется новая возможность через реинкарнацию.

[1] **Նույն տեղում,** էջ 149: